

Youngsich  
Lippel & Mangel

891.99
7-99

ԱԶԱՏՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԹԻՒՆ 5

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ԵՐԳԵՐ

ԵՒ

ՏԱՂԵՐ



ԵՂԻՇԷՄՐԱԶԱՆ ԴՈՒՐԵԱՆԻ  
ԲԱՐԵՋՈՋ ԱՐՏՈՆՈՒԹԵԱՄԲ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Վ. ԵՒ Պ. ՋԱՐԳԱՐԵԱՆ ԵՂԱՐԻ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՏՆՈՒՐԵԱՆ

1908

891 99  
7-99

10 NOV 2011

89 99  
7-99

ՉԱՏ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻԻ 5

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ԵՐԳԵՐ

ԵՒ

ՏԱՂԵՐ



ԵՂԻՇԷ ՍՐԲԱԶԱՆ ԴՈՒՐԵԱՆԻ  
ԲԱՐԵՀԱՃ ԱՐՏՕԳՈՒԹԵԱՄԲ

ՀՐԱՏԱՐԱԿԻԶ

Վ. Ե. Պ. ԶԱՐԳԱՐԵԱՆ ԵՂԵԱՐԲ

Կ. ՊՈՂԻՍ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

1908

891 99

7-99

04 APR 2013

28268

# ՆՈՒԷՐ

Ա.Ո.

## Հ Ա Յ Կ Ա Ջ Ն

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆՆ



8637-76

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

# ԵՐԳԵՐ ԵՒ ՏԱՂԵՐ

Ի Ղ Ջ Ք

Ա.Ո.

## Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Երբոր ցողին փաղփռն չիթեր գիչերուն  
Խոտի՝ թերթի՝ ծաղկի վերայ կը տեղան,  
Եւ երբ երկինք աստղեր շողան մթավար,  
Ցայտեն արցունք՝ կայծ իմ աչերըս խաւար,

Ի՛նչ, Հայաստան, քեզ մոռնա՛լ...

Երբէ՛ք, այլ սև նոճի մ'ըլլալ, քեզ չո՛ւք տալ:

Ձիս աստղազարդ երկին սփոփել չ'է կարող,  
Մասեաց սարին արտասուալից է նա քօղ,  
Ձեր յիշատակն ինձի համար հեշտագին՝  
Նըման կուսին սիրոյ առջի արցունքին.

Դամբա՛նք, աւե՛րք, ձեզ մոռնա՛լ...

Երբէ՛ք, այլ ուղիս մ'արցունք ըլլալ, ձեզ ցօ՛ղ տալ:

Երկաթ՝ շղթայ՝ բանա՛ն եւ անդունդք ու վընկեր,  
Ամպրոպ ու շանթ, մահուան զանգակ ու ջահեր,  
Չ'է, չ'են կարող պահ մը ձեր վառ յիշատակ  
Ծածկել սեւի՝ ու սոսկումի՝ վէժի տակ.

Ազա՛տ օրե՛ր, ձեզ մոռնա՛լ...

Երբէ՛ք, այլ հուր մ'ըլլալ, եւ ձեզ Հայո՛ւն տալ:

Չուարթ ընութեան այն կամարներն ծաղկահիււս,  
Բոյր՝ կայծ ու գեղ, նայուածք՝ ժըպիտ սիրուհոյս,

Անուշ հովեր՝ արծաթ ալիք վըտակին  
Ձեր հուրն սրաէս պահ մը առնել չը կրցին .

Փառա՛ց օրեր, ձեզ մոռնալ . . .  
Երբէ՛ք, այլ ձեզ պատրոյք մ'ըլլալ, ու լո՛յս տալ :

Արշալոյսին տփգոյն աստղեր երբ փալփին,  
Գողաբը գեղգեղ վարդակարօտ բուլբուլին,  
Բնութեան դաշնակք, ո՛հ, չ'են կրնար նուագեր  
Ձձեղ հառաչք, յոր մօրնչեն նոճիներ .

Սե՛ւ սե՛ւ օրեր, ձեզ մոռնա՛լ . . .  
Երբէ՛ք, արիւն մ'ըլլալ, և ձեզ կարմի՛ր տալ :

Թերեւս ժպտին Հայոց մըթին սարերը,  
Կամ շունչ ծխեն Սիպիրիոյ սառերը,  
Բայց սեւ հոգիք ու սեւ ճանկեր անողոք  
Խեղդել կուգան ազատ հոգւոյս իմ բողոք,

Արդարութի՛ւն, քեզ մոռնա՛լ . . .  
Երբէ՛ք, այլ սուր մ'ըլլալ, սրտեր քեզ մուտ տալ :

Մինչ ց'ե՛րբ գոչեմ, ձայնըս մէկը չը լսեր,  
Հայն իւր ժանգոտ շղթան երբէ՛ք չը սարսեր . . .  
Բնաւ ինձ հետ իրաւունք ոչ թոթովեց,  
«Հայր չես» ծաղրեց, և ձայնը զիս չը թովեց .

Հայ՛ ու շղթայ, ձեզ մոռնա՛լ,  
Երբէ՛ք, այլ շունչ մ'ըլլալ, ու ձեզ ոգի տալ :

Հարուստն ու կղեր թէ ազգ ըղգան և վառին,  
Թէ «Լոյս և Սէր» հայ սրտերուն մէջ թառին,  
Պէ հայութիւն երկնէ «Ազատ դաւակներ»,  
Թ'եղբայրութեան՝ սիրոյ վառին կըրակներ,

Քնա՛րդ իմ, զքեզ մոռնա՛նալ,  
Ո՛չ, յետ շիրմիս քեզ ձայն ըլլալ, ու հայ լալ :

Ի ՊԱՏՐԻԱՐԲԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

### Ա Մ Ե Ն . Հ Ա Յ Ր Ի Կ Ի Ն

Այն սըգալի սեւ սեւ նոճեաց ետեւէն  
Արշալոյսին շողք մեզի «Լո՛յս» կ'աւետեն,  
Խուսեց խաւարն, փողփողէ լոյս արեւուն  
Հայոց կարմիր մարգաց սառուտ սարերուն,  
Փըլատակաց մըթին խորքէն կուգայ ձայն  
Հայե՛ր, Հայե՛ր, դեռ Հայաստան չ'է՛ կործան . . .

Ձայն տըւողը չէ ըստուեր,  
Հուր ներշնչողք չ'են աստղեր,  
Եղբայրութեան է հուր ձայն,  
Հայը սիրող Հա՛յն է այն :

Նա գիշերուան հետ ազգ խոկաց ու լացաւ,  
Եւ արեւուն սըլաքաց հետ կրակ դարձաւ,  
Հողմոց թեւով միշտ սըլացաւ հայկարան,  
Տիգրիսի հետ թրջեց աւերք տիրական .  
Հայաստանի՛ եղբայրութեան սիրահար,  
«Հայ» գոչելով շուրթերն եղան դալկահար :  
Աւարայրի նա վարդին  
Սոխակն եղաւ արամագին,  
«Վարդան» գոչեց նա, անդէն  
Վասակն եղաւ դամբանէն :

Նա իրաւո՛ւնք՝ ազատութի՛ւն գոչեց յար,  
Փոշոտ ու խոնջ օտքերն նետեց, ուր Հայ կար .  
Ուր որ հայ կար, Չերմ համբուրեց նա այն հողն,  
Ուր Հայն շնչեց՝ հառաչ և հուր զրկեց հոն,  
Բոցաթըռիչ Հայէ առ Հայ նա թռաւ,  
Հարուած՝ ցաւ՝ դաւ սէրն խեղդելու չ'եղան բաւ :

Այս հայկազնը չունէր սուր,  
Այլ կուրծն ունէր հայ՝ խաչ՝ հուր .  
Կը հաղնէր սեւ ու գրգլեակ,  
Նա գո՛ւթ ունէր, ո՛չ քըսակ :

Ազա՛տ սիրեց, ազա՛տ գոչեց, չը թովեց,  
 Հայն զ՛ախ ատեց, Հայ մը ձեռքը չը թովեց.  
 Բանա՛ կախազանն՝ աքսոր՝ Սիւլիր և սուսեր  
 Չը կրցին ձայնն մարել՝ խեղդել իր յոյսեր.  
 Միշտ «Հայ» կանչեց, բարձն էր դիտուն Մասեաց սար  
 Նա սիրան ըբաւ հայրենայուչ գոռ ջընար :

Արդ հայրենեաց մեր չնչիկ՝  
 Հով մը կուգայ անուշիկ՝  
 Վառ ճակատուց այցելու,  
 Հայուն աչերն սրբելու :

Բա՛ց են թեւեր, բա՛ց են սրտեր, բա՛ց ճակատ,  
 Եկո՛ օգնել արկար Հայուն ապաբախտ,  
 Հո՛ւր հայրենեաց, եզբայրութեան դու հագա՛գ,  
 Քընարահար Հայու մը իղձ քեզ հրեշտակ.  
 Վէս Վոսփորին ալիք ըզքեզ բարեւեն,  
 Յրուէ՛, սեւ ձեռք, սեւ ամպ, Հայոց արեւէն :

Աբասոր ու զիրադ թող փալփիին՝  
 Ձերթ աստղեր հայ երկնքին,  
 Եւ սորվեցուր Հայուն դու  
 Սիրել՛, օգնել իրարու :

Արտասոււթոր՝ քե՛զ կը նային հայ՝ աչեր,  
 Սեւ շղթաներ քեզ ցոյց կուտան գոռ քաջեր,  
 Մըշոյ կտրիճք՝ աղլիկք ի քեզ ապաստան  
 Հայն ու դամբանն՝ տաճարն՝ հիւղակն՝ Հայաստան.  
 Թո՛ղ փլատակաց մոխրէն յառնեն յիշատակք,  
 Մութ մենաստանք վերափայլեն նախնի փառք . . .

Լո՛յս, լո՛յս տեղան ամեն տեղ,  
 Գիտութի՛ւն, լո՛յսն հայ աստեղ,  
 Լո՛յս հիւղակին, լո՛յս վըհին,  
 Լո՛յս հայ փառաց շէջ ջահին :

Ահա սրանայ մեզ ազազայ բոցազէս,  
 Մեր հայրենի աւերակաց տալ լոյս վէս.

Հարկ չ'են մեզի նիզակ և սուր ու վառօդ.  
 Իբաւունքի՛ սիրոյ՝ լուսոյ ենք կարօտ.  
 Եզբայրութեան Հայն կը յենու, ո՛չ թագի,  
 Բռնէ ձեռքէն որ շունչ առնէ և հոգի.

Եւ ալ մռնայ հայկազն հէք  
 Հին հարուածներն ու խոր վէրք :  
 Եւ սիրաք ի տրօփ որօտան  
 — Կեա՛ց միշտ ՀԱՅՐԻԿ ԽԸՐԻՄԵԱՆ :»

1869

Ի ԳԻՄԱՆՈՒՌՈՒԹԵԱՆ

### ԱՄԵՆ. ՀԱՅՐԻԿԻՆ

Ո՛վ է որ գայ մեզ՝ ձեզքած օդն՝ ալին,  
 Ճակատն գոհարք՝ աստեղք կը փայլին.  
 Թագաւո՛ր մ'է Հայ, որ ցատկեց չիրմէն, —  
 Ո՛չ, դէժքը վառողք արցունք ըսալի են.  
 Նա կ'արհամարհէ ծիրանի՛ փառքեր,  
 Նա սեւ է հագեր :

Նա մեր հայ եզբարց արցունքն է քաւեր,  
 Յոյց կուտայ մեզի արիւն ու աւեր,  
 Դիւցա՛զն մ'է, որ դո՛ւրս թըռաւ դամբանէն,  
 Ո՛չ, թուր չ'է՛ ձեռքն՝ այլ խաչ բռներ արդէն,  
 Չը ցայտեր աչքէն շանթեր, այլ սէ՛ր՝ գո՛ւթ.  
 Դողայ անկէ՛ Բուրդ :

Նա կուգայ Հայոց մարգերէն կարմիր,  
 Ազատեց Բրդէն Հայը վշտակիր,  
 Խաչափայտով մը պանծացաւ յաղթող,  
 Հնչեցուց ի Հայս ազատութեան փող,  
 Տեսէ՛ք, բուրձ հագեր, կարճեա ենք դրակ,  
 Բայց սիրան է կըրակ :

Գայ Մասեաց սարէն՝ նա ձախն ու աջը  
 Մովսէսի քընարն՝ Դեւոնդի խաչը,  
 Աստղի մը նայուածք, քընարի մը ձայն,  
 Աղեաց խորերէն կը սիրէ նա Հայն,  
 Դեռ չը ճանչցա՞ք զ'այն, ճակա՛տք վշտակոծ,  
 Հրեշտակն է Հայոց:

Ահա կը հնչէ նորա հեշտ սըրինգ,  
 Արձազանգ կուտան Հայոց դաշտք՝ լերինք,  
 Երթանք իր շուրջը, Հայեր արտալած,  
 Ձը խաբեր՝ մատնեք նա մեզ օտարաց,  
 Ձը սիրեր ոսկի՝ փառք ու վատ մարդիկ,  
 Հայուն է Հայրիկ:

Գլխիկը դըբած սըզաւոր սըքեմ,  
 Ձը թափիր ճակոռն դեռ ալիք վըսեմ,  
 Բայց դէմքին վրայ կանուխ են փթթած  
 Անցքի ու վշտի խորշոմներ միշտ թաց.  
 Միակ վարձք մ'ունի՛ր այն է կոչել զ'ինք  
 «ԽՐՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ»

1869

### Հ Ա Յ Ր Ի Կ Ն Հ Ա Յ Ո Յ

Փութա՛, հովուապե՛տ, սիրող յար ազատ՝  
 Հարազատ,  
 Փարատի՛ սեւ ամպ, փայլի արդ արեւ  
 Արդարեւ,  
 Փողփողին՝ դաշտեր, ազատ առնենք քայլ  
 Առ նենգ դայլ,  
 Յըցո՛ւր ցուպդ, Հայերն կանչէ՛ր յարօտ մի՛  
 Յար հոտ մի:  
 Ճանկեր արիւնոտ կուրծ մեր թափ առինք,  
 Թափառի՛նք,

Եկո՛, հովուէ՛ մեզ, սիրածդ, աղաւթէ՛ր,  
 Աղդ ա՛ս էր:  
 Դու գըրթոտ նըման երկնի հայրիկին՝  
 Յ'այր՝ ի կին՝  
 Յ'որոց և յ'ալիս սփռէ՛ լոյս և սէր,  
 Լո՛յս եւս, է՛ր  
 Յաւի՛ չը զարթնու հրճուած յ'այդուն յ'այն  
 Յա՛յ, քուն հայնս  
 Սոխակ մ'էիր մերթ ի նոճս, ւ՛ երգերդ՝  
 Վերքերըդ  
 Առած բիւրաւոր՝ դեռ դու կանչեցիր,  
 Կա՛ն, չ'է՛ ցիր  
 Երգերդ միշտ մեր սիրտ, սիրոյ՛ հոգւոյ ձա՛յն,  
 Յ'ոգւոց հա՛յն  
 Հանեց՝ վառեցաւ ձայնէդ՝ իմացաւ  
 Հիմա ցաւ.  
 Քե՛զ խնդրէ Հայն արդ, ամբոխ ամբոխ չ'է՛  
 Ամբողջ է.  
 Արդ ըսէ՛ Հայուն, ըսէ՛ աղդ անոր  
 Աստանոր.  
 Ես կարօտ եմ վառ սրտից՝ ձեռքերի,  
 Ձեր գերի,  
 Եղբարքն ազատե՛լ, լո՛յս տալ ի Մասիս.  
 Ի մաս յիս  
 Առնել իմ նախնեաց արիւն արտասուքէն,  
 Արդ սուգէն  
 Ելնեն Հայք՝ օրհնեն սիրով յաւէտ իս  
 Յ'աւետիս.  
 Յանկամ, որ Հայք ինձ ըսեն ա՛հ, յամայր  
 «Ահա՛ մայր».  
 Այս իմ վերջին տենչ, միշտ ճետք Հայկայ կա՛ն  
 Հայկական:

1869

ՆՈՐ ՍԵՒ ՅՐԵՐ

Մինչ բնութեան՝ ընկա՛ն արեան դարերը,  
Աշխարհ մը կայ արցունք թափող սարերը,  
Արեամբ պղտոր դեռ գետերուն ափունքը,  
Չը դադրեցաւ դեռ այս երկրին սեւ սուգը.

Աւերակոյտն այս անարկու,  
Աշխարհ մոխրոց ու նոճերու:

Հայ դիւցազանց՝ որ հոն ընկան ի վաղուց՝  
Ազնորտիքն՝ արմատներն այն վրբիժուց  
Ա՛հ, դեռ բողբոջ մը չ'արձակած հո՞ղ դարձան...  
Ուրեմն հիմա աղիք չ'ունի Հայաստան...

Ա՛յ, դալկահար դու հայրենիք...  
— Եւ դեռ Քրդին ալ խոնարհինք:

Մառախուղ են հագեր՝ դաշտքն ու լեւրինքը,  
Չը գեղգեղեր Հայ հովուհւոյն սըրինդը,  
Հայուն համար չը վաղփըլեր աստղիկը,  
Արցունքներով թոռմեր հոգւոյն ծաղիկը.

Դադրեր անմեղ խինդ՝ թինդ ու պար,  
Շողայ ազատ Քրդին տապար:

Դողդոջ մանէ առագաստը գիրգ հարսը,  
Արտասուաթոր՝ գէժքին ծածկած հող վարսը՝  
Որ չըլլայ թէ յանկարծ սիրոյ մըմունջը  
Խափանէ վատ Քրդին տափոտ մըունջը.

Մէրը փեսին արեամբ կարմրի,  
Հարսը Քրդին կ'երթայ գերի...:

Մի՛շտ կը ցանէ Հայն, չը հնձեր... անթի՛...  
Իր դալկահար դէմքէն երկու շիթ կաթի,  
Արտօսը ու քիբո միանգամայն... ս'վ Աստուած.  
Նա ճաշակէ արտմած սրտով ցաւ ու հաց.

Այս տարաբախդ ազգն է՝ Հա՛յը,  
Մեր արիւնը, մեր եղբայրը:

Ա՛հ, ռոնակոխ Հայուն սիրտը և տաճար  
Հրացանն յ'ուս սա կոշտ Քրդին անդադար,  
Եւ մեր ներսը չ'եռա՛ր կարմիր մէկ ալին  
Կամ մէկ փրփուրն հայրենեաց սուրբ կրակին,  
Որ սառոյցի գերթ որդիներ՝  
Մեր աղիքները չ'ենք թոթվեր:

Ի՛նչ սիրտ է այս որ հոս գամեր է Աստուած,  
Մինչ չը սիրեր նա հայրենիքը ցաւած...  
Չ'ունի ներսը Հայն իր նախնեաց տըրփը,  
Լըքէ՛ր է զ'ինք ճակատագրին Սերբը,  
Երես դարձուց Հայն սուսերէն,  
(Սեւ) ժառանգեց լոկ պապերէն:

Սառէ աչեր՝ քարէ լեզու, ա՛յս մընաց  
Իբւր փառքերէն մեր գու ու պերճ հայրենեաց,  
Սեւազլուխ խուժը մը ագռա՛ւ մնաց լոկ՝  
Կամ խուժը մը կոյր խըլուրդ՝ ըստրո՛ւկ փառքի սոսկ,  
Ա՛հ, այն արծիւ ժողովրդէն՝  
Որ հարուածվի արդ կոշտ Քրդէն:

Ի՛նչ, սեւ ձեռքեր հըպին վըճիտ ճակատին,  
Հայ կուսիկին նըւիրական լաշակին,  
Դըժոխք մը տարի թօշնեն վարդը կուսութեան,  
Կարծես ծաղիկ կը կոխկուտեն — դ'այս կըզգան,  
Եւ երբոր Հայ մը մորթեն,  
Կարծեն թէ հաւ մը մորթեն:

Է՛հ, մի վախէք ասեղ մ'անգամ պէտք չէ մեզ,  
Այլ հայրենի սոսկ ըզգացում մ'աղեկէ՛ղ՝  
Ժանգոտ սուր մը՝ պատուած դրօշ մը թէ չ'ունինք,  
Կուրծերնուս տակ տըրփող սի՛բո մ'ալ չունինք,  
Օ՛ն ռաքերնիս զարնե՛նք գետին,  
Յայտնե՛նք մեր ցաւը անագին:

Մեր քերթ վարդերն եւ արեւներն մեր եղբարց՝  
 Մեր տաճարաց խաչերն՝ պատի՛ւն հայրենեաց,  
 Մենք պահանջենք՝ բարօրութի՛ւն մեր ազգին,  
 Զ'ա՛յս պահանջենք՝ զ'այս Սուլթանէն սրտագին,

Մեր պատիւն ու Քուրդը կ'ուզե՛նք,  
 Եւ կամ նորա զէնքին դէ՛մ զէ՛նք:

1871

### Ե Ր Պ

## Մ Ա Ր Տ Ի Ն Վ Ա Ր Դ Ա Ն Ա Ն Յ

Արի՛ք, որդի՛ք Արարատեան,  
 Նըսեմ ճակատք ցայտե՛ն թող շանթ,  
 Դողդոջ ձեռաց մէջ սուր ցուան,  
 Արդար վրիժուց ժամն հասաւ արդ,  
 Փշրի՛ Պարսկին անդուլ կացին,

Հայք բաւ լացին.

Մեռնի՛նք Մասեաց շուքերուն տակ,  
 Յաւէրժ կանգնեն յաղթանակ.

Օ՛ն, աղա՛տ ըլլանք  
 Եւ Հայաստան մեր,  
 Թող տան արձագանգ  
 Մասիք անվեհեր.

Մեռնի՛նք յ'Արտազ՝ տղմուտի մօտ՝  
 Ուստի ծագի մեզ առաւօտ:

Մեր սուսերց փայլէն  
 Սասանին Սասանք,  
 Մեր ամէն քայլէն  
 Ծագի յաղթանակ:

1869

## Վ Ի Շ Տ Ք Հ Ա Յ Ո Ւ Ն

Փոխանակ քաղցր օրօրներու, հայրենի՛ք,  
 Որբանիս քով մայրիկս ըզքեզ միշտ ողբաց,  
 Համբուրին հետ շիթ մ'ըզգացի արտասուեաց  
 Աչերս տեսան արցունքներու լոկ երկինք:  
 Աւերակաց ծաղկանցը սոսկ այցելու  
 Զեփիւռն չ'եկաւ նժդեհ ճակատս շոյելու,  
 Փառաց դարեր ծընող՝ ընկնող հայրենի՛ք,  
 Մամռոտ աւերք և դամբարան զօրավիգ:

Արարատեան հսկայից

Ուր ծոր ճակտով վիրալից

Հեծէ ոգին հայկական . . . :

Բայց ի դո՛ւր, ողբ՝ վայ՝ կական

Եւ արտասուք ու հառաչ

Քեզ սփոփել չ'են կարող,

Այլ վեհ ճակատ քրտնաշող

Ի՛արիւնաբուղիս կող ու լանջ:

Մոխիր հագած՝ արիւն ծըծած սեւ հողեր,

Որ կը տիրեն սոսկում՝ տըխուր յիշատակք,

Ալ թուր են ծոցէդ յուսոյ քաղցր հրեշտակք

Եւ արիւնոտ դավնի մ'անգամ չ'են թողեր . . . :

Սեւ շղթաներ եղան ինծի խանձարուր,

Մըթութեան մէջ սրտիս վըրայ հսկեց սուր,

Միթէ Հա՛յ եմ՝ մինչդեռ չ'ես իմօ, Հայաստա՛ն,

Եւ հոյակապ՝ վէս կոթողներդ պատուանդան.

Օտարաց գահդ՝ յիշատակ,

Ի գլուխ կրես դու պըսակ

Արդ փըշահիւս՝ սեւ նոճի . . .

Ալ չըկա՛յ վառ թագդ առջի՛

Որուն ականց տեղ անգին՝

Դառնաթախիժ մըտածմանց

Գրտունքներ սառ՝ քար կտրած՝

Կնճռոտ ճակատդ պճնեցին:

Երբոր տեսաւ արիւնլըւայ վարդին ծոց՝  
 Վարդատարփիկ բուլբուլն դողով թռչեցաւ,  
 Սուգին փափկիկ թեւքն արցունքով թրջեցաւ՝  
 Սիրազեղ լանջը կուսից տեսաւ երբ 'ի խոց...  
 Լըռեցին քնար՝ համբոյր՝ գեղգեղ և մրմունջ,  
 Հրաժե՛շտ արեց ... և սիրակաթ շուրթեր մունջ  
 Համբուրեցին սեւ հողեր՝ ժայռ և ալիք,  
 Թոյլ թոյլ՝ բիւր բիւր ոգիք թըռան արամալիք:

Մասեաց մուսայք դողահար՝  
 Թողին պսակ և քնար.  
 Դաշտեր՝ ձորեր և սարեր՝  
 Ալիք՝ ժայռեր և սառեր՝  
 Հէ՛զ Հայրենիք Հայաստա՛ն,  
 Ըզքե՛զ ըզքեզ ոլբացին՝  
 Որ ուրացողք քեզ բացին  
 Բիւր բիւր՝ սեւ սեւ գերեզման:

Հայն էր որ թագըդ գըլորեց փայլարձակ,  
 Եւ ալեւոր ձակտիդ բարդեց սեւ ամպեր,  
 Յետոյ վայեց՝ երբ դերեզման կըշտապէր,  
 Այլ շնչասպառ էր՝ չ՛ունէր ձեռքը կայծակ՝  
 Որ այն ամպերն փոթորկաբեր փարատէր,  
 Եւ հայրենիքն շղթաներէ աղատէր.  
 Նոճեաց խորքը մահուան շունչը սօսափեց,  
 Սոսկմամբ ցնորած Հայն իր երկրէն խուսարեց:

Թողուց աւեր և արիւն,  
 Թաղեց հոն փառք և աիւն.  
 Արդ կը տեսնէ բոթաբեր  
 Ներկայն՝ ձիգ մը չը թափեր,  
 Հայաստա՛ն, քեզ փրկելու,  
 Անդգայ դարձած դարէ դար՝  
 Չը յիշեր քեզ, չը փութար  
 Քեզ անձկանօք գրկելու:

Թ Ր Ք Ո Ւ Հ Ի Ն

Երեկոյ է. բոցավառ է հորիզոն,  
 Կառք մը կ'անցնի դադաղի պէս յամբընթաց,  
 Գեղուհի մը ընկողմանած արօրիէ հոն,  
 Վերջալոյսի աղջիկ մ'է սա, ո՛վ Աստուած.

Եթէ նայի,  
 Կ'ըսես — «հի՛մա կը մարի:»

Մեղրամոմէ անդրիանդի մ'է հանգոյն,  
 Ի՛նչ դալկահար... կարծես հաշաղը վառէ  
 Պատան մ'է նուրբ ներս վարդիկը դժգոյն.  
 Աստուած ըզնէ զոյգ մ'աչերտոյն կը վառէ.

Եթէ ժպտի,  
 Կ'ըսես — «հի՛մա կ'անցնի:»

Նայիլ կ'ուզէ, բայց աւելի կ'ընդադի,  
 Սիրաբ խունկի պէս կը մըխա՛յ սիրավառ,  
 Նէ շողերու՝ բոյրերու է թագուհի,  
 Խոնջ թիթեռնիկ մ'որ կը խնդրէ ծաղկէ թառ.

Եթէ շարժի,  
 Կ'ըսես, — հի՛մա կը թռչի:»

Լանջն է յուզեալ Ովկէանի մը նըման.  
 Կ'ուզէ սիրել... համբոյրի մը հետ նուազիլ,  
 Մաշիլ, խամբիլ, խոնջած ընկնիլ գերեզման,  
 Բամեւ սիրոյ կրակէ բաժկին հուսկ կաթիլ.

Եթէ չիկնի,  
 Կ'ըսես — հի՛մա կը բռնկի:»

Արտի մեղձու, ինչպէս կոչեց Լամարթին՝  
 Որուն ծրծած ծաղիկը՝ սիրա, մեղրն է սէր,  
 Ես կոչեմ զնէ կո՛յս՝ որուն սիրան է երկին  
 Անհուն սիրոյ որ հորիզոն չ'ունի դեռ:

Եթէ խօսի,  
 Կ'ըսես — հի՛մա կը հասնի:»

Նէ կը վառի, մի՛շտ կը վառի, չը հասնիր  
 Տընանկ կընոջ տաճարն վառած ճրագին պէս,  
 Աստղերու նման գիշեր սիրէ՝ փողփողիլ,  
 Կրակ մ'է փրթած կողէն սիրոյ բոցագէտ...  
 Թէ իսկ մեռնի,  
 Կ'ըսես — հի՛մա կը ծնի:»

Կ'ըսես — հի՛մա կը ծնի:»

### Ս Ի Բ Ե Յ Է Ք ՉՄ Ի Մ Ե Ա Ն Ս

Վարդակարմիր Գողգոթային վեհ գազաթ  
 Միշտ փսլփլոզ, սիրոյ անշէ՛ջ ճառագայթ,  
 Դեռ կըսպասե՛ս թափել սրտից քու սըլաք.  
 Զո՞վ կը հըսկես, վեհ և անդո՞ւնդ, թէ կըմախք,  
 Որ սեւ ժայռից մէջ մարեցաւ այն բեկբեկ  
 Բարբառն վըսեմ թէ «ըզմիմեանս սիրեցէ՛ք» :

Ծածկէ ամպով կարմիր կողերդ, Գողգոթա՛յ,  
 Եւ թող խայտան ցաւոտ ոսկերք սեւ Յուդայ . . . :  
 Ժանգոտ ու գուլ թուրերն առին կարմիր փայլ,  
 Նոր կըրօնին հետ արեան ուղիք առին քայլ . . .  
 Անթանօթին առջի բոմբիւնն թեղդեց սէք  
 Զքաղցր հազագ թէ «ըզմիմեանս սիրեցէ՛ք» :

Մարդազոհով Վատիկանի մըխացին  
 Ծխնելոյզքը, կամարքը «փա՛ռք» գոռացին,  
 Փոխ—Գրիստոսք խաչն ըրին դաստակ կացինի՛  
 Սեւ դըրօշ մը առելութեան արիւնի,  
 Դարուց մոխրէն կամ ամպերէն յուսայ հէք  
 Զրկեալն լըսել թէ «ըզմիմեանս սիրեցէ՛ք» :

Տնանկին դամբանը կ'անհետի ոտնակոխ,  
 Տընակին մէջ մարի առկայծ կանթեղն հող,  
 Այն մութին մէջ նօթի արդեկք կը հեծեն,  
 Դղեակը խրախ մինչեւ լոյս ջահք կը հիւծեն,  
 Հարուստին կառք ժխորով կ'անցնի սըրբաշաւ,  
 Հէքին դագաղն իր գերեզմանն լուռ իջաւ . . . :

Գեթսեմանին իջնող հրեշտակն դալկահար՝  
 Որ գեղ՝ ծաղիկ՝ արցունք ու փառք չը ճանչնար՝  
 Նորա ցուրտ գոգն աղքատը սոսկ կ'ըսփոփի,  
 Ճոխն և տընանկ պատանքին մէջ կ'ըլլան մի  
 Կայծակնաթեւ թէ մըռնջեն մըրբիկներ  
 Թէ «սիրեցէ՛ք զ'իրար», հէքն հոս չեն սիրեր :



# ԱՋԱՏ ՄԱՏԵՆԱՇԱՐ

Սոյն շարքէն հրատարակուած են ցարդ՝

1. — Սև հողեր կամ յեփն գիւեր Աւարուս- 1, 2.  
եան, քաւերգութիւն Պետրոս Գուրեանի 2
2. — Աւերակ (բանսի յիւսակներ) Վահան  
Թորովենց . . . . . 1
3. — Բնդարձակ հայկական երգարան Ա. հասո 3, 50
4. — Վանգոյժ երիմեան Հայրիկի . . . . . 1, 50
5. — Երգեր եւ Տաղեր Պետրոս Գուրեանի . . . 1

Զարդարեան եղբայրներու գրատան մէջ մեծաքանակ եւ փոքրաքանակ կը վաճառուին հետեւեալ աղատ հրատարակութիւնները .

- |   |        |
|---|--------|
| Փրկիչներ, քաւերգութիւն Առանձարի . . . . .     | 6      |
| Վոսի ծիծաղը (պատմութիւններ) » . . . . .       | 12, 50 |
| Կարմիր օրեր . . . . .                         | 6, 25  |
| Փնտրեան օնախ . . . . .                        | 8      |
| Քրիզանթով, Մ. Պարսամեան . . . . .             | 4      |
| Վեղարուոր Սասնան, Ե. Արմեն . . . . .          | 1      |
| Թիապարսք վեպ, Ա. Շիսանեան, 2 հատր . . . . .   | 15     |
| Կարիպ ախպեր, » » . . . . .                    | 5      |
| Հայրենիքի զոհեր, վեպ . . . . .                | 7, 50  |
| Նեսա, քարգ. Պուլիարեան . . . . .              | 2, 50  |
| Թուրք քերորի ծերեկն, Օ. Չիճքե-Սարաճ . . . . . | 1, 50  |
| Չնանները Կ. Բարդամեան . . . . .               | 10     |
| Մինաս Չերազի մեծաղիւր պատկեր . . . . .        | 2      |
| Հայորդիները Ա. եւ Բ. Եարֆ . . . . .           | 5      |
| » Գ. » . . . . .                              | 5      |
| Լեւոն Ե. Լուսինեան, Կ. Բամանեան . . . . .     | 47, 50 |

Նաեւ մեծանուն վրպագիր Ռաֆֆիի հետեւեալ երկերը .

- |   |    |
|---|----|
| Զայլադիւն . . . . .                                       | 6  |
| Խենքը եւ Նալայեղսին . . . . .                             | 24 |
| Սամուել . . . . .   | 36 |
| Դաւիթ բեկ . . . . .                                       | 36 |
| Կայծեր Ա. հասո . . . . .                                  | 24 |
| » Բ. » եւ վերջ . . . . .                                  | 36 |
| Խաչագողի յիւսակարանը . . . . .                            | 24 |
| Խամսայի մեխիութիւնները, Լարապաղի աստ-<br>ղագէտը . . . . . | 24 |
| Ոսկի ախաղաղը . . . . .                                    | 12 |

ՀԱՍՅԷ — Կ. Պոլիս Զաւինաֆնչար 24—26  
Զարդարեան գրատուն

Հայաստանի Ազգային գրատուն



NL0431410

28268